

«Հայաստանի Հանրապետություն մշտական բնակչության տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց նկատմամբ արտոնության կիրառման, Հայաստանի Հանրապետության տարածքից բացակայելու հանգամանքը և ժամանակահատվածը ստուգելու, օտարերկրյա ֆիզիկական անձին՝ մշտական բնակչության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթ տրամադրելու կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 1461-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 20__ թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈՒՄՎԱԾ ԱՆՁ ՃԱՆԱԶՉՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓԱՒՍՏԱԿԱՆԻ, ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆ՝ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈՒՄՎԱԾ ԱՆՁ ՃԱՆԱԶՉՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1461-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 249.1 հոդվածի 6-րդ մասով Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել`

1) Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության
տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ
Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի, հարկադիր
տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց
նկատմամբ արտոնության կիրառման կարգը` համաձայն հավելված N 1-ի,

2) Հայաստանի Հանրապետության տարածքից բացակայելու
հանգամանքը և ժամանակահատվածը ստուգելու, օտարերկրյա ֆիզիկական
անձին` մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն
տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթ տրամադրելու կարգը` համաձայն
հավելված N 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի
Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական
անձանց համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված արտոնության կիրառման կարգը սահմանելու մասին» N
1461-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան